# Հայաստանի Հան

HAYASTANY HANRAPETUTIUN DAILY, ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА «АЙАСТАНИ АНРАПЕТУТЮН», ՕՐԱԹ

**ՔՐՈՆԻԿՈՆ**

## Այցելել են Եռաբլուր պանթեոն



Նախագահ **Սերժ Սարգսյանը** դեկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. **Գարեգին Բ** Ամենայն հայոց կաթողիկոսի հետ եւ հանրապետության բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ այցելել է Եռաբլուր պանթեոն, հարգանքի տուրք մատուցել հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին:

## Պատարագներ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ

Նախագահ **Սերժ Սարգսյանը** եւ տիկին **Ռիտա Սարգսյանը** հունվարի 6-ին ներկա են գտնվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցված պատարագին: Սուրբ պատարագի արարողությանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԱԺ նախագահ **Գալուստ Սահակյանը**, ՀՀ վարչապետ **Հովիկ Աբրահամյանը**, պետական բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, հասարակական գործիչներ, կրթության, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչներ:

Մայր Տաճարում սուրբ եւ անմահ պատարագ է մատուցել Ն.Ս.Օ.Տ.Տ. **Գարեգին Բ** Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը:

Նախօրեին Սերժ Սարգսյանը մայրաքաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցում ներկա է գտնվել նաեւ Սուրբ Ծննդյան Ճրագալույցի պատարագին:

## Այց սահմանային պաշտպանական տեղամասեր եւ գյուղեր

Հայաստանի Հանրապետության նախագահ, Հայաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար **Սերժ Սարգսյանն** Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Ամենայն հայոց կաթողիկոս **Գարեգին Երկրորդի**, ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանի** հետ նախորդ տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ին այցելել է հանրապետության հարավ-

# Զարհուրել

### Բոլոր միջո

Երեկ Գյումրիում տեղի է ունեցել սահմռկեցուցիչ հանցա գործություն: Այդ կապակցությամբ նախագահ **Սերժ Սարգսյանը** հրատապ սելեկտորային խորհրդակցություն է անցկա ցրել իրավապահ մարմինների ղեկավարների հետ, որի ըն թացքում քննարկվել է ամենակարճ ժամկետում դրա մանրամաս ները պարզելու, մեղավորներին հայտնաբերելու եւ օրենքի ողջ խստությամբ պատասխանատվության ենթարկելու կարեւո րությունը: Այս մասին հայտնում է ՀՀ *նախագահի մամլո գրա սենյակը*:

Հայաստանում տեղակայված ռուսական զինվորական բազայի հրամանատարությունը լիարժեքորեն համագործակցում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների հետ եւ գործուն օժանդակություն ցուցաբերում գործի քննությանը:

Այժմ կատարվում են անհրաժեշտ բոլոր քայլերն այդ բարբարոսությունն իրականացրած հանցագործին հայտնաբերելու ուղղությամբ: Գործը գտնվում է հանրապետության նախագահի անմիջական վերահսկողության ներքո:

Նախագահն իր խորին ցավակցությունն ու զորակցությունն է հայտնել զոհվածների հարազատներին՝ կիսելով կորստյան անսահման վիշտն ու ցավը:

Իր եւ Ազգային ժողովի կողմից զոհվածների հարազատներին ցավակցել է ԱԺ նախագահը:

Կատարված ողբերգության կապակցությամբ իրենց հայ պաշտոնակիցների հետ հեռախոսազրույց են ունեցել ՌԴ պաշտպանության նախարարն ու արտգործնախարարը: ՀՀ-ում ՌԴ դեսպանատունը ցավակցել է Գյումրիում տեղի ունեցած միջադեպի առթիվ, իսկ արտակարգ եւ լիազոր դեսպանն այցելել է ՀՀ ԱԳՆ:

Տե՛ս նաեւ էջ 2

# Փոքր ուժերով՝

### Խորհրդակցություն մարզ

Երեկ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ պաշտպանության նախարարի հանդիպում-խորհրդակցությունը Երեւանի եւ Արմավիրի կայազորների զորամասերի ստորաբաժանումների հրամանատարական կազմերի հետ, հայտնում են ՀՀ ՊՆ *տեղեկատ-*



ՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

..., ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1990 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՑ

13 ՀՈՒՆՎԱՐ 2015, ԵՐԵՔՇԱԲԹԻ, ԹԻՎ 1 (6047)

# ոճրագործություն Գյումրիում

## երն ուղղված են հանցագործին հայտնաբերելուն




# ծ արդյունքներ

## ամերգային համալիրում



ռումները պետք է համարել մեծ գործի սկիզբ եւ կրկնապատկված եռանդով առաջ շարժվել:

Առաջընթաց կա նաեւ անվտանգության մակարդակի բարձրացման առումով, եւ 2015թ. գերակա խնդիրը եա

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ նախագահի հրամանագիրը

Հաշվի առնելով արդարադատության խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին» թիվ ԱԽ-29-Ո-27 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95 հոդվածի 1-ին կետով եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 114 հոդվածը եւ 117 հոդվածի 8-րդ մասը՝ ՀՀ նախագահը որոշել է.

1. Հաստատել Արդարադատության խորհրդի 2014 թվականի

